



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

16 մարտի 2023 թվական թիվ 26-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի և 82.1 հոդվածի 6-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝**

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

- Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
- Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
- Կ. ԱՐՇԱԿՅԱՆ
- Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
- Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
- Ա. ԴՐՄԵՅԱՆ
- Ա. ԻԳԻԹՅԱՆ
- Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
- Լ. ՂԱԶԱՐՅԱՆ
- Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
- Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
- Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

16 մարտի 2023 թվական  
գյուղ Ախուրյան




Ա. ԻԳԻԹՅԱՆ

Հավելված  
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի  
Ախուրյան համայնքի ավագանու  
2023 թվականի մարտի 16-ի 26-Ա որոշման

## Հաշվետվություն

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի կատարման  
վերաբերյալ



Ախուրյան համայնք 2023թ.

## Ներածություն

Սույն հաշվետվությունը մշակվել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի կողմից, այն հասցեագրված է Ախուրյանի բազմաբնակավայր համայնքի ավագանուն, աշխատակազմին, համայնքային կազմակերպություններին, բնակիչներին, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպություններին ու խմբերին, ինչպես նաև շահագրգիռ այլ մարդկանց: Համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանում ներկայացված է եղել Ախուրյան համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունը: Նպատակ է դրվել նախատեսված ռազմավարական քաղաքականությամբ ճիշտ ժամանակին արդյունավետ և առարկայական լուծումներ տալ համայնքային խնդիրներին: Ախուրյան համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը նպատակ է հետապնդել արդյունավետ պլանավորման և հետևողական աշխատանքի միջոցով բարձրացնել համայնքի տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման նշաձողը, հստակեցնել դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ, այն նպատակ է ունեցել ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները՝ համայնքային խնդիրներն առավել արդյունավետ լուծելու գործում: Ախուրյան համայնքի 2022 թվականի ՏԱՊ-ը բաղկացած է եղել 4 հիմնական բաժիններից, որոնք կառուցվել են զարգացման ծրագրային նպատակներից առարկայական, տեսանելի արդյունքների հասնելու տրամաբանական հենքի վրա: Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները սահմանելիս, հաշվի են առնվել 2022 թվականին Ախուրյան համայնքում ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակներում սահմանված նպատակները, զարգացման հիմնական ուղղություններն ու խթանները: 2022 թվականին նախատեսված ծրագրերի ցանկը և դրանց տրամաբանական հիմքերը ներկայացված են եղել ըստ բնակավայրերի և համապատասխան ծրագրային արժեքների: Համայնքի տարեկան աշխատանքային պլանի կատարման հաշվետվությունն ուսումնասիրելիս տեսանելի է, որ 2022 թվականին նախատեսված սուբվենցիոն ծրագրերը իրականացվել են պատշաճ, ընթացիկ և ստացված արդյունքները գոհացնող են, նախատեսված միջոցները ծախսվել են սահմանված նպատակներին համապատասխան: Որոշ դեպքերում նույնիսկ առկա են տնտեսումներ: Կան ծրագրեր, որոնք անհնար են եղել ավարտին հասցնել 2022 թվականի ընթացքում: Ծրագրերը ՀՀ կառավարության կողմից հաստատվել են 2022 թվականի հունիս ամսին, աշխատանքների գնման ընթացակարգերն իրականացվել են բաց մրցույթով /40 օր/, որի արդյունքում խախտվել է

աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը: Նման ծրագրերը ավարտին կհասցվեն 2023 թվականի ընթացքում: Անաչառ գնահատող ցանկացած ոք կփաստի, որ հաշվետու տարում պատասխանատու մոտեցմամբ նպատակասլաց աշխատանքի շնորհիվ հաջողվել է իրականացնել մեծածավալ աշխատանք, որը իհարկե դեռևս բավարար չէ առավել գեղեցիկ, հարմարավետ, կանաչապատ, բոլոր առումներով ներկայանալի համայնք ունենալու համար: Կատարվածից բացի դեռ տասնապատիկ, հարյուրապատիկ աշխատանք կա անելու: Ուստի առաջարկում ենք մեր ուժն ու եռանդը, աշխատասիրությունը մեկտեղել մեր համայնքի բարեկեցությանն ուղղված աշխատանքային շղթան կրկնապատկելու, եռապատկելու պատվաբեր գործին: Խաղաղ և բեղմնավոր աշխատանքային տարի եմ մաղթում բոլորիս:

Հիմնվելով սույն հաշվետվությունում կատարված վերլուծության արդյունքների և եզրակացությունների վրա՝ հիմնական առաջարկությունները հետևյալներն են՝

✓ Շարունակական աշխատանքներ իրականացնել համայնքում ինչպես մասնավոր հատվածի, այնպես էլ տարբեր դոնոր կազմակերպությունների կողմից միջոցներ ներգրավելու ուղղությամբ:

✓ Բնակչության հետ տանել ակտիվ բացատրական աշխատանքներ հարկերի և տուրքերի անկանխիկ եղանակով վճարման անհրաժեշտության և համայնքում իրականացվող ծրագրերի իրազեկման ուղղությամբ:

2022 թվականի ընթացքում անցկացվել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու թվով 16 նիստ, որից 7-ը՝ արտահերթ: Ավագանու նիստերին ներկայացվել է 267 որոշման նախագիծ, որից ընդունվել է 254-ը, իսկ 13-ի վերաբերյալ ավագանին որոշում չի ընդունել: Ավագանու որոշումները վերաբերել են համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակների, պաշտոնային դրույթաչափերի ու համայնքի բյուջեի հաստատմանը, բյուջեում փոփոխությունների կատարմանը, բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումների տրամադրմանը, բյուջեից տարբեր ծրագրերի ֆինանսավորմանն ու համաֆինանսավորմանը, սուբվենցիոն ծրագրերի հաստատմանը, համայնքի բնակիչներին, արդյունքներ գրանցած մարզիկներին և մարզիչներին սոցիալական և դրամական աջակցություն տրամադրելուն, համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելուն, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելուն և այլ հարցերին:

Համայնքի կենտրոնում ու բնակավայրերում կազմակերպվել և անցկացվել են շուրջ 75 հանրային լսում՝ համայնքի բյուջեի նախագծի քննարկման, համայնքում առկա հիմնախնդիրների վերհանման՝ դրանք հնգամյա զարգացման ծրագրում ընդգրկելու նպատակով, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի աճուրդ-վաճառքով օտարման վերաբերյալ:

Ավագանու կողմից ստեղծված մշտական հանձնաժողովների կողմից անցկացվել է 18 նիստ:

Կազմակերպվել և անցկացվել է մրցույթ թվով 4 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար:

### ***Սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացված աշխատանքներ.***

2022 թվականի ընթացքում համայնքի բյուջեից ֆինանսական աջակցություն է ստացել թվով 272 անապահով ընտանիք: Կազմվել են չորս տեղական ծրագրեր, որոնցից երեքը քննարկվել և հաստատվել է Ախուրյան համայնքի ավագանու կողմից:

2022 թ. սեպտեմբեր ամսից Շվեյցարական դոնոր կազմակերպության և «Արևամանուկ» ՀԿ-ի միջնորդությամբ Այգաբաց և Արևիկ բնակավայրերում իրականացվում է 12 միայնակ ծերերի խնամք: Վորլդ Վիժն կազմակերպության կողմից իրականացվել է 8 անապահով ընտանիքների անդամների ուսուցման ծրագիր, ծրագրի ավարտին շահառուներին հատկացվել են սարքավորումներ: Անցկացվել է սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացը ապահովող մշտական գործող հանձնաժողովի 7 նիստեր: Անցկացվել է համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 8 նիստեր:

2022 թվականի հունվարի 1-ից վարվել է «Վեկտոր+» տեղեկատվական ավտոմատացված համակարգը՝ գրանցվել են համակարգում բացակայող փոխադրամիջոցները, շինությունները և հողատարածքները, իրականացվել է հարկատուների ընթացիկ հաշվառում, հեռացվել են համակարգում առկա կրկնակի գրանցումները, համակարգում կատարվել են ճշտումներ՝ կադաստրային ստորաբաժանման կողմից տրամադրված տվյալների հիման վրա: Համայնքների եկամուտների կառավարման համակարգի միջոցով իրականացվել է օգտվողի գործառույթները՝ մասնավորապես հարկատուների կողմից վճարումների բաշխումներ, տրամադրվել տեղեկանքներ, սխալների առկայության դեպքում գրանցվել է տվյալների ուղղման հայտ, անշարժ գույքի հարկի արտոնություններից օգտվելու իրավունքը հաստատող փաստաթղթեր ներկայացրած անձանց սահմանվել է արտոնություն, օրենքով սահմանված կարգով կատարվել է գերավճարների հաշվանցում և վերադարձ: Կազմվել է 500000(հինգ հարյուր հազար) և ավելի հարկային պարտավորություն ունեցող անձանց ցուցակ և իրականացվել է ծանուցագրեր տրամադրելու աշխատանքներ: Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի միջոցով իրականացվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն: Կազմվել է և ավագանու քննարկման է ներկայացվել փոխադրամիջոցների և անշարժ գույքերի արտոնության տրամադրման նախագծեր:


Հաշվետու տարում Ախուրյան համայնքի բնակչությանը տրամադրվել է թվով 2351 տարաբնույթ տեղեկանք:

2022 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից հարուցվել է թվով 24 վարչական վարույթ՝ «Վարձակալության պայմանագրով օգտագործման տրամադրված հողերի վարձավճարների գանձման պահանջ ներկայացնելու մասին» և «Հողի հարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին»:

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի **աշխատակազմի ֆինանսարևութագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժինը** 2022 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ ներկայացրել է առանձին հաշվետվություն:

2022թ. Բյուջեի մուտքերը **2 120 829,5**

հազար դրամ






**Համայնքի 2022թ.բյուջեի եկամուտներն ըստ վարչական և ֆոնդային մասերի**


հազար դրամ

1708373,0



**Վարչական բյուջեի եկամուտներ**

362050.5.6



**Ֆոնդային բյուջեի եկամուտներ**

## Համայնքի 2022թ.բյուջեի կատարողականը

Հազար դրամ

Աղյուսակ 1

Ը/Ը	Ցուցանիշներ	Տարեկան պլան	Փաստացի կատարված պլան	%
1	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	0	1528,6	0
2	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	0	59373,5	0
3	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ	165927,0	90638,9	54.6
4	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	213914,5	208132,8	97.3
5	Տեղական տուրքեր	11530,2	8794,1	76.3
6	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	2000,0	3486,3	174.3
7	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	1156211,0	1156211,0	100.0
8	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	319.9	319.9	100
9	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	356487,0	182814,9	0
10	Գույքի վարձակալությունից եկամուտներ	119885,0	75957,4	63.4
11	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	1999,0	1999,0	100
12	Տեղական վճարներ	111200,5	70903,3	63.8
13	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	0	3042,0	0
14	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0	13735,6	0
15	Այլ եկամուտներ ,օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	12928,0	27986,3	216.5
16	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	165500	165500	100
17	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-10000	26876,9	0
18	Հավելուրդ/պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներ	510272,3	215905,9	42.3

**Համայնքի 2022թ. բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման հոդվածների (ոլորտների)**

Հազար դրամ

Աղյուսակ 2

Ը/Ը	Ցուցանիշներ	Գումար	տես. կշիռ
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	865255	76,8
2	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0	
3	Տնտեսական հարաբերություններ	346899,7	84.8
4	Շրջակա միջավայրի պաշտպանություն	88899.0	92.1
5	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	141207,7	78.8
6	Առողջապահություն	0	
7	Հանգիստ, մշակույթ և կրոն	29002,7	58.9
8	Կրթություն	628800,9	81.6
9	Սոցիալական պաշտպանություն	15593,1	65.8
10	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	5171,4	64.9

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի **քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի** կողմից 2022 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու կողմից ընդունված թվով 254 որոշումների հաշվառման, համայնքապետարանի պաշտոնական կայքէջում տեղադրման և ՀՀ Շիրակի մարզպետարան առաքման աշխատանքներ:

2. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի կողմից ընդունված թվով 760 որոշումների հաշվառման, համայնքապետարանի պաշտոնական կայքէջում տեղադրման և ՀՀ Շիրակի մարզպետարան առաքման աշխատանքներ:

3. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի կողմից արձակած թվով 461 կարգադրությունների հաշվառման, համայնքապետարանի պաշտոնական կայքէջում տեղադրման աշխատանքներ:

4. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից արձակած թվով 271 հրամանների հաշվառման, համայնքապետարանի պաշտոնական կայքէջում տեղադրման աշխատանքներ:

5. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի թվով 74 համայնքային ծառայողի անձնական գործերի վարման և պահպանման աշխատանքներ:

6. ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողների անձնական գործերի և կադրերի հաշվառման մատյանի վարման և պահպանման աշխատանքներ՝

- 1) քաղաքական պաշտոններ – թվով 4 անձնական գործ
- 2) հայեցողական պաշտոններ – թվով 7 անձնական գործ
- 3) վարչական պաշտոններ- թվով 32 անձնական գործ
- 4) տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ-թվով 46 անձնական գործ
- 5) ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության փորձագետ-թվով 1 անձնական գործ
- 6) ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու խմբակցությունների գործավարներ-թվով 2 անձնական գործ
- 7) քաղաքացիական աշխատանք իրականացնողներ-թվով 34 անձնական գործ
- 8) ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ – թվով 22 անձնական գործ